



# Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԵՒ ԱԶԳԱՅԻՆ  
**Ա Մ Ս Ա Գ Ի Ր**

Ռ Յ Խ Գ • Ի Ը • Տ Ա Ր Ի •

Հ Ե Մ Ե Ր Ե Մ Ե Զ Ե Ծ Ե

ՅՈՒՆՈՒՍԻ 1895 Թ.

## ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ



... Դառարն անցանէ եւ  
 Լոյսն ճշմարիտ արդէն իսկ ն-  
 րեւի: Որ անէ, եթէ ի Լոյսն  
 իցէ եւ զեղբայր իւր ատիցէ,  
 սուտ է եւ ի խաւարէ է տա-  
 կաւին:»  
 Ա. Յովնան. 2:8-9:

մեռն է զեռ. սառցէ կա-  
 շպանքը շղթայում է վը-  
 տաին ու աղբերակունք,  
 բքարեր հողմը պաղու-  
 թիւն և թախծալի մնայլ  
 է սիւռում երկնից և երկ-  
 րի երեսին. բայց ահա սառ-  
 նամանեաց զրկում վերածնում փթթում է  
 նոր տարին և բնութիւնը խոր շունչ է քա-  
 շում. զեռ տժգոյն է արևը, զեռ անգոր են

նորա ճառագայթները, սակայն վեր՝ միշտ ա-  
 լելի վեր է բարձրանում նա հորիզոնի վե-  
 րայ և շատ չի անցնի, վերևում կանգնած իւր  
 կենսաբեր ջերմութիւնը կցօղէ, ձմրան կապան-  
 քը կփշրէ, նոր զարուն կրացուի, նոր օրեր  
 կզան, ծառն ու թռչուն կենդանութիւն կառ-  
 նեն: Կոր-տարի է, արարած աշխարհ զգում  
 է այդ և կենսառատ յուսով շնչում: կանցնի  
 կանցնի շուտով ցուրան ու մնայլ, ջերմ հո-  
 վեր կշնչեն, կեանք և ուրախութիւն կրերեն:  
 Խաւար է զեռ, մարախլապատ է մարդկա-  
 յին կեանքի հորիզոնը. դուրսն անպակաս չա-  
 բազուշակ փոթորկալից ամպերը, ներսը մարդ-  
 կանց ետական կուրծքերի տակ մեռելային պա-  
 ղութիւն է տիրում. չոր ու սև կրքեր կաշ-  
 կանդում են սրտերը, մթին են հոգիք, դա-  
 ժան ու մնայլ մտքերով պաշարուած. սակայն,

տես, հեռու արևելքում շողում է բարեգու-  
շակ աստղը, ձշմարտութեան Արեգակի ծա-  
գումն աւետում աշխարհին, իւր մեղմ ողե-  
պարար լուսով ցոյց է տալիս այն տեղը, ուր  
չքաւորութեան և խոնարհութեան գրկում  
հանգչում է Բեթղեհէմի Մորածին Մանուկը,  
և ամեն իմաստուն, որի հայեացքը դէպի վեր,  
դէպի վսեմն ու խորհրդաւորն է ուղղուած, որ  
երկնքի երեսը քննել զիտէ, ամեն սիրտ, որ  
հոգւական պարզութիւն և անկեղծութիւն  
ունի, որ երկնաւոր բարին ու գեղեցիկը ան-  
մեղ սրբութեամբ ընդունելու արամազիր է,  
հիացած խոնարհում և երկրպագութիւն  
է մատուցանում հրաշալի Մանկան. անպատ-  
մելի բերկրութեամբ և յուսով զգածուած՝  
զարթում, ելնում են թմրած հողիներն և ա-  
մեն ջերմեռանդն քրիստոնեայ բերան միմըն-  
ջում է. «խաւարն անցանէ և լոյսն ձշմարիտ  
արդէն իսկ երևի»:

Չմեռն է դեռ և խաւար. անվերջ հոգ-  
սերի, անասելի ցաւերի շղթան քեզ վերայ  
ծանրանում է, բնութիւն և մարդիկ սառցէ ան-  
տարբերութեամբ քեզ տանջում են, մթու-  
թեան մէջ խարխափում կորստեան անդուն-  
դի շուրջն ես պտտում, տառապեալ ժողո-  
վուրդ, անպաշտպան հէգ Հայ, բաց աչքդ,  
վերև նայիր, նոր տարի է, տես, նոր օրերի,  
նոր կեանքի մերձակայութիւնը մի՞թէ չես  
զգում, չես հաւատում թէ քո վիշան էլ վերջ  
կունենայ, քեզ համար էլ զարուն կգայ, արև  
կծագէ: Աթէ մարդկանց վերայ վտասհութիւ-  
նըդ կորցրել ես, դառն փորձերից խրատուած՝  
խարուսիկ ես համարում այն բոլոր քաղցրա-  
հնչիւն լուրերը, որոնք մտաւուրա բարեբաղդ  
և փայլուն ապագայ են քեզ խոստանում,  
դարձուր աչքդ կրկին դէպի Բեթղեհէմ, ուր  
յուսոյ աստղն է փայլում, լուսոյ աստղը թող  
յուսալից բերկրութեան նշոյլներ կաթեցնէ, քո  
վշտակիր կուրծքի մէջ, բաց մանուկ թագաւորի  
առաջ սրտիդ գանձերը, նա նեղեալների ապա-  
ւէնն է, սգաւորների մխիթարիչը, թող օրհ-  
նէ քո նոր տարին, քեզ մի նոր կեանքի սկիզբ  
չնորհէ: Կարկամեալ լեղուդ թող շարժի. «խա-

ւարն... խաւարն անցանէ և լոյսն ձշմարիտ  
արդէն իսկ երևի»:

Լոյս... դեռ հազար տարիներ առաջ Հա-  
յի հեթանոս նախնիք լոյս էին որոնում մա-  
քուր կենդանարար մի լոյս էր նոցա տենչա-  
նաց բարձրադոյն առարկան. նոքա լոյս էին  
երգում ամեն գեղեցիկ, սուրբ, ցանկալի բան  
լուսոյ անունով կնքում. լուսոյ մէջ երանու-  
թիւն տեսնում մինչև որ յայտնուեցաւ Մեծ  
Լուսաւորիչը, Միածնի իջնան տեղում լու-  
սոյ վտակներ հոսեցին, Հայոց խաւար լեռնե-  
րի որդիներն անցան այդ աւազանից և լու-  
սանորոգ վերադարձան:

Լոյս... Այսօր էլ մեր ժողովուրդը ժա-  
մանակաւոր թմրութիւնից արթնացած լոյս է  
կանչում լուսոյ շաւիղներով դէպի փրկութիւն  
դիմել ձգտում. դարերի բռնութիւնը չէ մա-  
րել նորա կրծքում սրբազան տենչանքի հու-  
րը և նա կարօտ անձուկով դիմում է դէպի  
ամեն կողմ, ուր նորան լոյս են խոստանում,  
նորա աչքի առաջ լուսոյ լապտերներ են շո-  
ղացնում և բազմաթիւ են այդպիսի լապտեր-  
ների մթութեան մէջ մի առանձին հրապոյր  
ունին. ժամանակ է որ նա շուարած կանգ  
առնէ և հարցնէ. ո՞րն է ձշմարիտ լոյսը:

«Ո՞ր ասէ, եթէ ի լոյսն իցէ և գեղբայր  
իւր ափիցէ, սուտ է և ի խաւարի է տակա-  
ւին» ահա պատասխանը մի դատավճիռ, որ  
ուժգին հոգմի նման անցնում մարում է մեր  
շուրջ պսոզացող կարծեցեալ լոյսերը և խա-  
ւարի սաստկութիւնը եօթնպատիկ աւելի  
զգալի է դարձնում: Մենք բոլոր նոր ժամա-  
նակի զաւակներս մեզ լոյսի մէջ ենք համա-  
րում, խղճալով և արհամարհանօք յիշում  
անցեալ խաւարին ժամանակները, երբ արդի  
քաղաքակրթութեան շնորհած վայելքը չկար,  
հարկաւոր է միայն հայեացք ձգել ատելու-  
թեան այն կոհակների վերայ, որ մեր ժողո-  
վրդեան բոլոր խաւերի մէջ ծփում, օր օրի  
վերայ աւելանում են. եղբայր եղբօրից, բարե-  
կամ բարեկամից անջատում ահազին յորձանքի  
տակ սպառնում են կործանել այն ամենը, ինչ որ  
ազգային կեանքի բարոյական ոյժը, նորա վե-

լաճնութեան հիւքը պիտ կազմէր— և մենք զարհուրած կնկատենք, թէ ինչպէս արդարեւ ի խաւարի են տակաւին ինչպէս սխալ և վնասակար ենք գործ դրել այն ըստ ինքեան շահաբեր լոյսը, որ քաղաքակրթութիւնը մեր կեանքի վերայ սփռել է:

Բնական, ինքնարեւական, ճշմարիտ լոյսը իւր ջերմութիւնը հետը պիտ ունենայ. այն լոյսը, որ սիրոյ ջերմութիւնից զուրկ է, որ մարդոց սրտերը չէ հալում, իրար հետ կապում, սրբոյն ազնուին բարւոյն համար զգայուն դարձնում՝ կեղծ է, ասում է առաքեալը՝ մուրացածոյ և արուեստական: Աճմարիտ լոյսը միայն արտաքին անոտի փայլով մարդոց աչքերը չէ շլացնում, այլ ճառագայթում է նոցա հոգու մէջ. կրթում և ազնուացնում է նոցա սիրտը: Եթէ արդարեւ նոր տարին մի նոր կեանքի ճանապարհ պիտ բանայ մեզ համար, ապա մեր ճանապարհը այսպիսի լուսոյ լապտերով պէտք է լուսաւորուած լինի. եթէ մեր հոգևոր բարոյական կեանքը կաշկանդող անբերրի անապատ դարձնող սառնամանիքը զուարթերես դարնան տեղի պիտ տան՝ ապա ընդհանուր եղբայրական սիրոյ ջերմ՝ ճառագայթները պէտք է նորա վերայ ընկնեն, մինչև կուրծքերի խորքը թափանցեն:

Չմեռն է դեռ և խաւար, բայց հեռու հորիզոնի վերայ կանգնած՝ ջերմ լոյս է սփռում ամեն հաւատացեալի սրտի մէջ Բեթղեհէմի աւետարեւր աստղը և թելադրում՝ երգել երկնքի հրեշտակների հետ մէկ տեղ. «Փսալք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Կ. Ա.



ՄԾՂՆԵԼԻՅ ԱՂԱՆԻՐ \*



Պանդաւոր կամ հերետիկոս անունը նախնական ժամանակներէց ի վեր եկեղեցին տալիս է այն մարդոց, որոնք իրենց քրիստոնեայ են անուանում, բայց առաքեալների աւանդած ճշմարիտ հաւատքից շեղուելով՝ ինքնահնար մոլորութիւններին են հետևում:

Բնական է որ այդպիսի մոլորութիւններ նոյն իսկ քրիստոնէութեան առաջին քարոզութեան միջոցին մուտ գործէին եկեղեցւոյ մէջ: Թէ հրէաները և թէ հեթանոսները քրիստոնէութիւն ընդունելով՝ բերին իրենց հետ նախկին հայեացքները և սովորութիւնները, որոնք մասամբ միայն աւետարանին յարմարուել և նորա ստեղծագործող ազդեցութեան ներքոյ կերպարանափոխ լինել կարող էին. մնացորդից զանազան խառնուրդներ գոյացան, որոնք քրիստոնէութեան անուն կրելով՝ ձգտում էին իսկական քրիստոնէութեան տեղ անցնել և Ս. Աւետարանը օտար նպատակների ծառայեցնել: Առաջին քրիստոնեաները հրէաներ էին և առաջին մեծ արդելքը, որին աւետարանը պիտի յաղթէր՝ փարիսեցիական օրինապահութիւնն եղաւ: Արտաքին կարգերի, մանրակրկիտ ձևակերպութեանց սովորած մարդիկ հեշտութեամբ չէին կարող հաշտուել աւետարանի ազատ ոգու հետ, կամենում էին այդ ազատ վարդապետութիւնը օրէնքի նեղ սահմանների մէջ փակել և շարունակելով

\* Ժամ. Լրագրութեան մէջ արդէն մի քանի անգամ խօսք է եղել իմ գերմաներէն լեզուով նրատարակած «Պօղիկեանք Բիւզանդական կայսերութեան մէջ և արզաւից աղանդատը երեսոյթներ հայաստանում» գրուածքի մասին: Ծատերն ինձ առաջարկել են այդ գրքի հայերէն թարգմանութիւնը լոյս ընծայել, բայց ամբողջական թարգմանութիւնը մեր նասարակութեան համար աննպատակ գտնելով և նորանոր ուսումնասիրութիւններով ծոխացած աւելի նպատակայարմար աշխատութիւն ընծայելու միջոց չունենալով տալիս եմ այստեղ այդ գրուածքից մի նմուշ, ըստ մեկին ի հարկէ փոփոխած բոլորովին և ամսաթերթիս նպատակին յարմարեցրած: Գուցէ սպազայում կենտեւն նաեւ ուրիշ հատուածներ նոյն գրքից: